ԱԺԲԳ

ՏԵՂԵԿԱՆՔ

2021-2023թթ. ՀՀ տնտեսությունը բնութագրող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ (հունվար-ապրիլ)









Տնտեսական ակտիվության ցուցանիշը 2023թ. հունվար-ապրիլին 2022թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ (աճողական) կազմել է՝ 112.2%, 2022թ. հունվար-ապրիլին 2021թ.նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 109,4 %, իսկ 2021թ. հունվար-ապրիլին 2020թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 102,6%:

Արդյունաբերական արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2023թ. հուվար-ապրիլին կազմել է 747մլրդ 828.8 մլն դրամ, ինչը 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 6 մլրդ 859.7 մլն դրամով, իսկ 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 97 մլրդ 35.3 մլն դրամով:

Իրականացված շինարարության ծավալը (ընթացիկ գներով) 2023թ. հուվար-ապրիլին կազմել է 94 մլրդ 869.3 մլն դրամ, ինչը 2022 և 2021 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 13 մլրդ 613 մլն և 25 մլրդ 495.9 մլն դրամով:

Առևտրի շրջանառությունը (ընթացիկ գներով) 2023թ. հունվար-ապրիլին կազմել է 1 տրիլիոն 408 մլրդ 959.4 մլն դրամ, ինչը 2022 և 2021 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 322 մլրդ 360,1մլն և 490 մլրդ 83.1 մլն դրամով, իսկ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2023թ. հունվար-ապրիլին կազմել է 919 ml8d 266.4 մլն դրամ, ինչը 2022 և 2021թթ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 221 մլրդ 87,7 մլն և 368 մլրդ 241,7 մլն դրամով:

Արդյունաբերական արտադրանքի ծավալի իրական աճը 2023թ. հունվար-ապրիլին 2022թ. հունվար-ապրիլի նկատմամբ կազմել է 102.4%, 2022 և 2021 թվականների, ինչպես նաև 2021 և 2020 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 102.6%-ի և 100.9%-ի պարագայում:

Իրականացված շինարարության ծավալի իրական աճը 2023թ. հունվար-ապրիլին 2022թ. հունվար-ապրիլի նկատմամբ կազմել է 116%, 2022 և 2021 թվականների, ինչպես նաև 2021 և 2020 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 109%-ի և 120.3-ի %-ի պարագայում:

ԱԺԲԳ

Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)





Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)





Առևտրի շրջանառության իրական աճը 2023թ. հունվար-ապրիլին 2022թ. հունվար-ապրիլի նկատմամբ կազմել է 123.2%, 2022 և 2021 թվականների, ինչպես նաև 2021 և 2020 թվականների համեմատվող նույ ն ժամանակաշրջանների 107.8%-ի և 104.8%-ի պարագայում. իսկ այլ ծառայությունների ծավալի իրական աճը 2023թ. հունվար-ապրիլին 2022թ. հունվար-ապրիլի նկատմամբ կազմել է 122.2%, 2022 և 2021 թվականների ինչպես նաև 2021 և 2020 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 123.5%-ի և 97.1%-ի պարագայում:

Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում գործունեության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2023թ. հունվար-ապրիլին կազմել է 155 մլրդ 333.0 մլն դրամ, ինչը 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 42 մլրդ 215.1 մլն դրամով, 2021 թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ՝ 24 մլրդ 971.9 մլն դրամով:

Մշակող արդյունաբերության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2023թ. հուվար-ապրիլին կազմել է 466 մլրդ 908. 7 մլն դրամ, ինչը 2022 թ և 2021 թ նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է՝ համապատասխանաբար 38 մլրդ 887.3 մլն և 100 մլրդ 916.3 մլն դրամով: Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում գործունեության մասով արտադրանքի ծավալը 116 մլրդ 552.2 մլն դրամ, ինչը 2022թ. և 2021թ. նույն ժամանակաշրջանների (ընթացիկ գներով) 2023թ. հուվար-ապրիլին կազմել է 121 մլրդ 224.3 մլն դրամ, ինչը 2022թ.ցուցանիշից պակաս է 4 մլրդ 672.1 մլն դրամով և 2021 նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 18 մլրդ 830.6 մլն դրամով:

Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում գործունեության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2023թ. հուվար-ապրիլին կազմել է 9մլրդ 34.9 մլն դրամ, ինչը 2022թ. և 2021թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 1 մլրդ 140.2 մլն և 2 մլրդ 260.3 մլն դրամով:

Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2023թ. հունվար-ապրիլին 2022թ. հունվար-ապրիլին նկատմամբ կազմել է 96.0%, 2022 և 2021 թվականների, ինչպես նաև 2021 և 2020 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 87.7%-ի և 108.8%-ի պարագայում:

Մշակող արդյունաբերության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2023թ. հունվար-ապրիլին 2022թ. հունվար-ապրիլի նկատմամբ կազմել է 105.9%, 2022 և 2021 թվականների, ինչպես նաև 2021 և 2020 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 110.1%-ի և 96.1%-ի պարագայում:

Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2023թ. հունվար-ապրիլին 2022թ. հունվար-ապրիլի նկատմաբ կազմել է100%, 2022 և 2021 թվականների, ինչպես նաև 2021 և 2020 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 101.6%-ի և 109.7 %-ի պարագայում:

Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2023թ. հունվար-ապրիլին 2022թ. հունվար-ապրիլի նկատմամբ կազմել է 110.6%, 2022 և 2021 թվականների, ինչպես նաև 2021 և 2020 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 106.8%-ի և 102.8 %-ի պարագայում:

ԱԺԲԳ

Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)



Սպառողական գների ինդեքսը (ՍԳԻ) նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)



Զուտ միջազգային պահուստներ (ԶՄՊ), ժամանակաշրջանի վերջի դրությամբ, մլն. դրամ





Մշակույթ, զվարճություններ և հանգիստ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2023թ. հուվար-ապրիլին կազմել է 875 մլրդ 17 մլն դրամ, ինչը 2022 և 2021 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 4 մլրդ, 194.1 մլն և 6 մլրդ 144.6 մլն դրամով:

Տեղեկատվություն և կապ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2023թ. հուվար-ապրիլին կազմել է 199 մլրդ 946.1 մլն դրամ, ինչը 2022թ. և 2021 թ,ի նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համա պատասխանաբար 73մլրդ 515.5 մլն և 100 մլրդ 110.9 մլն դրամով:

Ֆինանսական և ապահովագրական գործունեություն ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2023թ. հուվար-ապրիլին կազմել է 249 մլրդ 976.2 մլն դրամ, ինչը 2022 և 2021 թվականների նույն ժամանա կաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 55 մլրդ 899.7 մլն և 94 մլրդ 552,6 մլն դրամով:

Մշակույթ, զվարճություններ և հանգիստ ծառայությունների ծավալի իրական աճը 2023թ. հունվար-ապրիլին 2022թ. հունվար-ապրիլին նկատմամբ կազմել է 104.7%, 2022 և 2021 թվականների, ինչպես նաև 2021 և 2020 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 104.9%-ի և 62.6%-ի պարագայում:

Տեղեկատվություն և կապ ծառայությունների ծավալի իրական աճը 2023թ. հունվար-ապրիլին 2022թ. հունվար-ապրիլի նկատմամբ կազմել է 158,0%, 2022 և 2021 թվականների, ինչպես նաև 2021 և 2020 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 126.7% և 113.5%-ի պարագայում:

Ֆինանսական և ապահովագրական գործունեություն ծառայությունների ծավալի իրական աճը 2023թ. հունվար-ապրիլին 2022թ. հունվար-ապրիլի նկատմամբ կազմել է 112.9%, 2022 և 2021 թվականների, ինչպես նաև 2021 և 2020 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 119.8%-ի և 102.2%-ի պարագայում:

ՍԳԻ-ն 2023թ. ապրիլին 2022թ. ապրիլի նկատմամբ կազմել է 106.2%, 2022թ. ապրիլին 2021թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 107.4%, 2021թ. ապրիլին 2020թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 105.4%: ՍԳԻ-ն 2023թ. ապրիլին 2022թ. դեկտեմբերի նկատմամբ կազմել է 100.9%, 2022թ. ապրիլին 2021թ.դեկտեմբերի նկատմամբ՝ 105.8%, 2021թ. ապրիլին 2020թ.դեկտեմբերի նկատմամբ՝ 105.1%:

Զուտ միջազգային պահուստները (ԶՄՊ) 2023թ. ապրիլի վերջի դրությամբ կազմել է 1 տրլ 71 մլրդ 857 մլն դրամ, ինչը 47մլրդ 843 մլն դրամով կամ 4.6%-ով ավել է 2022թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 160մլրդ 339 մլն դրամով կամ 13,0 %-ով պակաս է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Աշխատանք փնտրողների թիվը 2023թ. ապրիլի վերջի դրությամբ կազմել է 64836 մարդ, ինչը 15602 մարդով կամ 19.4%-ով պակաս է 2022թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 25592 մարդով կամ 28.3%-ով պակաս է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից: Պաշտոնապես գրանցված գործազուրկների միջին ամսական թվաքանակը 2023թ. ապրիլի դրությամբ կազմել է 46549 մարդ, ինչը 9072 մարդով կամ 16.3%-ով պակաս է 2022թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 16162 մարդով կամ 25.8%-ով պակաս է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

ԱԺԲԳ

ՀՀ արտաքին առևտրաշրջանառությունը և առևտրի հաշվեկշիռը (մլն ԱՄՆ դոլար)



ՀՀ արտահանումը և ներմուծումը (մլն ԱՄՆ դոլար)



Միջին ամսական անվանական աշխատավարձը աճողական, դրամ



Պետական բյուջեի պակասուրդը/հավելուրդը և դրա ֆինասավորման աղբյուրները, ընթացիք գներով, մլն դրամ



Արտաքին և փոխադարձ առևտրի առևտրաշրջանառության ծավալը 2023թ. հունվար-ապրիլին կազմել է 5մլրդ 804.0 մլն. դոլար, ինչը 2 մլրդ 893.0 մլն դոլարով կամ 99.4 %-ով ավել է 2022թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 3 մլրդ 632 մլն. դոլարով 167.2 %-ով ավել է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Արտաքին առևտրի հաշվեկշիռը 2023թ.ապրիլին կազմել է է 1 մլրդ 487.1 մլն դոլար, ինչը 2 մլրդ 336.2 մլն. դոլարով կամ 175.1%-ով ավել է 2022թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 2 մլրդ 20.1 մլն դոլարով կամ 279%-ով ավել է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Արտահանման ծավալը (ՖՕԲ գներով) 2023թ. ապրիլին կազմել է 2 մլրդ.158.4 մլն դոլար, ինչը 1 մլրդ 127.4 մլն.դոլարով կամ 99.7%-ով ավել է 2022թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 1 մլրդ 338.9 մլն դոլարով կամ 163.4 %-ով ավել է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Ներմուծման ծավալը (ՍԻՖ գներով) 2023թ. ապրիլին կազմել է 3 մլրդ 645,6 մլն դոլար, ինչը 1 մլրդ 217.2 մլն. դոլարով կամ 93.9 %-ով ավել է 2022թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 2 մլրդ 293.1 մլն դոլարով կամ 169.5 %-ով ավել է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Միջին ամսական անվանական աշխատավարձը (աճողական) 2023թ. հունվար-ապրիլին կազմել է 260042 դրամ, ինչը 46184 դրամով կամ 21.6 %-ով ավել է 2022թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 62464 դրամով կամ 31.6 %-ով ավել է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

2023թ. հունվար-ապրիլին ՀՀ պետական բյուջեի հավելուրդը կազմել է 170,242.6 մլն. դրամ, ընդ որում, ներքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը՝ -89,3929 մլն դրամ, արտաքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը՝ -80,849.7 մլն դրամ: 2022թ. հունվար-ապրիլին ՀՀ պետական բյուջեի հավելուրդը կազմել է 55,703.5 մլն դրամ: Ընդ որում ներքին և արտաքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը կազմել է համապատասխանաբար -14,861.5 և -40,842.0 մլն դրամ: 2021թ. հունվար-ապրիլին ՀՀ պետական բյուջեի պակասուրդը կազմել է -52,234.8 մլն դրամ, ընդ որում, ներքին և արտաքին աղբյուրներից ֆինանսավորումը կազմել է համապատասխանաբար -258,863.2 և 311,098.4 մլն դրամ:

Տեղեկատվության համար աղբյուր են հանդիսացել Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի ինտերնետային կայքի հրապարակումները ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակի վերաբերյալ